# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.12.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/102**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից 28.11.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/102 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

**1. «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 28.11.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ,

կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) հայտարարել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ), որի գնման առարկան է հանդիսանում Պատվիրատուի կարիքների համար մաքրող նյութերի և անձեռոցիկների ձեռքբերումը:

Աճուրդը խմբավորված է 4 չափաբաժիններում, որոնցից վերաբերելի է միայն 1-ին չափաբաժինը՝ մաքրող նյութեր (հեղուկ լվացող միջոցներ):

1-ին չափաբաժնի միակ մասնակից է եղել «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն:

12.11.2018թ. էլեկտրոնային աճուրդի համակարգից ստացվել է հաղորդագրություն այն մասին, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդում 1-ին չափաբաժնով հակադարձ աճուրդում Ընկերության կողմից տեղի է ունեցել նախահաշվային գնի գերազանցում:

13.11.2018թ. կազմվել է գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունը, որի բովանդակությունից պարզ չէ, թե ինչ իրավական և փաստական հիմքերով է մերժվել Ընկերության առաջարկը: Արձանագրությունում առկա են վերացական դատողություններ:

Մասնավորապես 3.1. կետում նշված է, որ «... էլեկտրոնային աճուրդի շրջանակներում Eauction համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացվել են մասնակիցների նախնական և վերջնական առաջարկները...»:

Վերջնական առաջարկներն իրենց հերթին արտացոլվել են Հավելված 1-ում, որի համաձայն՝ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն, թեկուզ կամավոր նվազեցրել է իր առաջարկի գինը, այդուհանդերձ շարունակել է մնալ միակ մասնակիցը:

Այսպիսով՝ առկա են բոլոր անհրաժեշտ նախադրյալները, որպեսզի Ընկերությունը ճանաչվի հաղթող և համապատասխան պայմանագրերը կնքելու իրավունք ստանա,

մինչդեռ հանձնաժողովը կամայական հաղորդագրության միջոցով Ընկերության հաղթող ճանաչելու իրավունքը մերժել է՝ վկայակոչելով նախահաշվային գնի գերազանցումը:

Հարկ է նշել, որ նախահաշվային գնի մասին որևէ հիշատակում հրավերում չի եղել, ուստի մերժումն ունի բացառապես կամայական բնույթ:

Հրավերի 5-րդ բաժինը կարգավորում է գնային առաջարկի հետ կապված իրավահարաբերությունները, սակայն այնտեղ որևէ նշում չկա նախահաշվային գնի մասին:

Հրավերի 7.7 կետի համաձայն՝ աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքներն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են ըստ յուրաքանչյուր չափաբաժնի համար սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների համար գնման հայտով սահմանված գները, գնման ընթացակարգի տվյալ չափաբաժինը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվում է չկայացած:

Վերջին կետից ակնհայտ է, որ Պատվիրատուն առաջին հերթին պետք է ըստ յուրաքանչյուր չափաբաժնի սահմաներ գնվելիք ապրանքների համար գներ, ապա իրավունք ունենար ներկայացված հայտով ներկայացված գները համեմատել իր կողմից նախապես սահմանված գների հետ և արձանագրել, որ աճուրդը չի կայացել:

Տվյալ դեպքում նախապես սահմանված գներ չեն եղել, ուստի գների սահմանի գերազանցում ևս չի կարող տեղի ունենալ:

Հրավերի 7.9 կետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում մերժվում են այն հայտերը, որոնց գներն աճուրդի ամփոփումից հետո գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակներում գնվելիք ապրանքների համար սահմանված գները:

Տվյալ դեպքում աճուրդի արդյունքների ամփոփման արձանագրությունից որևէ կերպ պարզ չէ, թե իրականում ինչ է տեղի ունեցել Ընկերության հայտի հետ և ինչ հիմնավորում է դրված Ընկերության հայտի մերժման հիմքում:

Բացի այդ, Ընկերությունը հանդիսանում է միակ մասնակից, ուստի որևէ խոչընդոտ չկար որպեսզի կիրառվեր Հրավերի 7.9 կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգը, որի

համաձայն՝ եթե արձանագրվում են անհամապատասխանություններ սույն հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե սույն ենթակետով սահմանված ժամկետում մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Տվյալ դեպքում չի իրականացվել կասեցում, չի պարզաբանվել սահմանված գնի չափը, որպեսզի Ընկերությունը կարողանար վերացնել անհամապատասխանությունը և հայտը գնահատվեր բավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է պնդել, որ նման վարքագիծը վկայում է հանձնաժողովի նախատրամադրվածության և նախապես սահմանված գին չլինելու մասին:

Այսպիսով՝ Ընկերությունը գտնում է, որ Աճուրդն կայացել է օրենքի և հրավերի պայմանների էական խախտումներով, ինչը հանձնաժողովը հաշվի չի առել և կայացրել է ոչ իրավաչափ որոշում:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Արգելել Աճուրդի գնահատող հանձնաժողովին թիվ 1 չափաբաժնի մասով հայտարարել նոր ընթացակարգ:

2. Թիվ 1 չափաբաժնի մասով անվավեր ճանաչել էլեկտրոնային աճուրդի արդյունքները:

3. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին կայացնել «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ին թիվ 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում:

4. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին կայացնել «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի հետ թիվ 1 չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշում:

«Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

**2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.12.2018թ. թիվ ԴՎԱ/4998 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում առաջին չափաբաժնի մասով «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է ոչ թե Աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից որևէ կամայական հաղորդագրության միջոցով, այլ Eauction համակարգի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 18-րդ կետի համաձայն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ԳԲԽ-ԱՄ-2018/102 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-ԱՄ-2018/102 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մաքրող նյութերի և անձեռոցիկների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

2. Աճուրդի 1-ին չափաբանի մասով հայտ ներկայացրած միակ մասնակիցը հանդիսացել է «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.11.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.2-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին):

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի 28.11.2018թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.12.2018թ. թիվ ԴՎԱ/4998 գրությունը և կից փաստաթղթերը, գտնում եմ, որ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի՝ 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և առկա են պլանավորված, սակայն տվյալ գնման համար օրենքով սահմանված կարգով չնախատեսված ֆինանսական միջոցներ, հայտով ներկայացվում է նաև նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 18-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը, «Գնումների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվում է չկայացած:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մաքրող նյութերի և անձեռոցիկների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի 1-ին չափաբաժնով նախատեսվել է ձեռքբերել «մաքրող նյութեր (հեղուկ լվացող միջոցներ)» ապրանքատեսակը:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մաքրող նյութերի և անձեռոցիկների ձեռքբերման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի՝ 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և առկա են պլանավորված, սակայն տվյալ գնման համար օրենքով սահմանված կարգով չնախատեսված ֆինանսական միջոցներ, հայտով ներկայացվում է նաև նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտով «մաքրող նյութեր (հեղուկ լվացող միջոցներ)» ապրանքի մեկ միավորի (կգ) համար որպես առավելագույն գին սահմանվել է 286 ՀՀ դրամ: Նույն գնման հայտի համաձայն՝ «մաքրող նյութեր (հեղուկ լվացող միջոցներ)» ապրանքի քանակը սահմանվել է 60 500 կգ:

Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել է ձեռքբերել 60 500 կգ «մաքրող նյութեր (հեղուկ լվացող միջոցներ)» ապրանք:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.11.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած միակ մասնակիցը հանդիսացել է «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից ներկայացված նախնական առաջարկը կազմել է 21 175 020 ՀՀ դրամ, իսկ վերջնական գնային առաջարկը՝ 20 160 000 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 18-րդ կետը սահմանում է, ***որ աճուրդն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվում է չկայացած:***

Տվյալ դեպքում Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով միակ մասնակից «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը գերազանցել է «մաքրող նյութեր (հեղուկ լվացող միջոցներ)» ապրանքի համար Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտով սահմանված գինը՝ այն է Ընկերության կողմից ներկայացվել է 20 160 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, իսկ գնման հայտով ապրանքի համար նախատեսված առավելագույն գինը կազմել է 17 303 000 ՀՀ դրամ: Այսպիսով՝ Ընկերության կողմից ներկայացված գինը գերազանցել է ապրանքի համար գնման հայտով նախատեսված գինը, ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն հանդիսացել է տվյալ չափաբաժնի մասով միակ մասնակիցը, ուստիև ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 18-րդ կետի համաձայն Աճուրդի առաջին չափաբաժինը համակարգի կողմից ավտոմատ կերպով հայտարարվել է չկայացած:

Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ Eauction համակարգում տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը չի հրապարակվում:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, քանի որ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի հայտը մերժվել է ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 18-րդ կետի հիման վրա և ընթացակարգը հայտարարվել չկայացած համակարգի կողմից ավտոմատ եղանակով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքում վկայակոչված այն փաստին, որ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը չի տրվել հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, ապա հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 18-րդ կետը սահմանում է, ***որ աճուրդն ամփոփվելու պահին,*** եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվում է չկայացած:

Այսպիսով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին չափաբաժինը չկայացած է հայտարարվել Կարգի 18-րդ կետի հիման վրա աճուրդն ամփոփվելու պահին, քանի որ Ընկերությունը հանդիսացել է տվյալ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած միակ մասնակիցը:

Իսկ Հրավերի 7-րդ կետի 7.9-րդ ենթակետի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում գնահատվում են մասնակիցների կողմից ներկայացված ***դիմում-հայտարարությունների՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության հանգամանքը:*** Դիմում-հայտարարությունների գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, աշխատանքային օրվա ընթացքում: Եթե արձանագրվում են անհամապատասխանություններ սույն հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը համակարգի միջոցով նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե սույն ենթակետով սահմանված ժամկետում մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Դրա հետ մեկտեղ ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով սույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը*** կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ***ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից 28.11.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ